

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2018 թվականի N ____

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, Արովյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Արովյան համայնքի 2019 թվականի բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 1 524 625.0 հազար դրամ.

2) ծախսերի գծով՝ 1 524 625.0 հազար դրամ.

3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ:

2. Արովյան համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 0.0 հազար դրամ:

3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը՝ համաձայն հատված 4-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

9. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նախագիծը պատրաստեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Մ. Գուլոյանը

Իրավաբանական բաժնի պետ

Զ. Սարգսյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Արովյան համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով Արովյան համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Արովյան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 1 524 625.0 հազար դրամ, դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ:

1. Բյուջեի եկամուտների կանխատեսում

Արովյան համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 524 625.0 հազար դրամ, գերազանցելով նախորդ տարվա պլանավորված բյուջեն 4.3 %-ով, որը կազմում է 63 139.2 հազար դրամ:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 758 831.7 հազար դրամ՝ 2018 թվականի հաստատված 731 727.1 հազար դրամի դիմաց, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 3.7 %-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում:

Մասնավորապես.

1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 301800.0 հազար դրամի չափով կամ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 11800.0 հազար դրամ կամ 4.1 %-ով ավել: 2019 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են հիմքում ունենալով 2018 թվականի կատարողականը, համայնքում հարկերի հավաքագրման համար իրականացվող միջոցառումների հետևողականությունը և արդյունավետությունը: Հարկային եկամուտները ծրագրելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2019 թվականի հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է գույքային հարկերի բազաների ճշտումների արդյունքից, ինչպես նաև համայնքում նոր գրանցված փոխադրամիջոցների հարկից:

Տեղական տուրքերը ծրագրվել են 28 020.0 հազար դրամի չափով, որը 1 870.0 հազար դրամով կամ 7.2 %-ով գերազանցում է 2018 թվականի ծրագրային ցուցանիշը: Այն պայմանավորված է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունների ավելացմամբ և նոր կիրառվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծխակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար նախատեսված տուրքերից:

Պետական տուրքերը ծրագրվել են 26 500.0 հազար դրամ՝ 2018 թվականի համար հաստատված ցուցանիշի չափով, որից՝ քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 8 500.0 հազար դրամ, նոտարական գրասենյակի կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 18 000.0 հազար դրամ:

2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախագծով ծրագրվել են 731 125.1 հազար դրամ՝ 2018 թվականին նախատեսված գումարի համեմատ աճելով 5.2 %-ով կամ 36 034.6 հազար դրամով, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) պլանավորվել են հիմք ընդունելով 2018 թվականին հաստատված գումարները:

3) Այլ եկամուտներ.

2019 թվականի ծրագրով այլ եկամուտները նախատեսվել են 429 011.7 հազար դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 415 571.1 հազար դրամի դիմաց կամ 3.2 %-ով ավելի: Այլ եկամուտները իրենց մեջ ներառում են հողի և գույքի վարձակալությունից

եկամուտները, վարչական գանձումները (նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններում համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարներ), տեղական վճարները, տույժեր, տուգանքները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները և այլ եկամուտներ: 2018 թվականի բյուջեով հաստատված ցուցանիշի նկատմամբ 3.2 % եկամտի աճը պլանավորվել է համայնքում աղբահանության վճարների հավաքագրման ճիշտ մեթոդի կիրառման հետևանքով՝ նախորդ տարիների չվճարած ապառքները վճարելու դեպքում քաղաքացիները օգտվում զեղչերի կիրառման համակարգից:

2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

Արժվյան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 1 958 350.0 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 77.9 %-ը կամ 1 524 625.0 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 433 725.0 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 433 725.0 հազար դրամ: Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում 13.9 %-ը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, 0.1 %-ը՝ «Պաշտպանություն» և «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» ոլորտներին, 4.5 %-ը՝ «Տնտեսական հարաբերություններ» ոլորտին, 20.1 %-ը՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտին, 5.3 %-ը՝ «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ոլորտին, 0.1 %-ը՝ «Առողջապահություն» ոլորտին, 4.8 %-ը՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին, 47.0 %-ը՝ «Կրթություն» ոլորտին, 0.3 %-ը՝ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտին, 3.9 %-ը՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր» ոլորտին: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 5.1 %-ի չափով՝ ապահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները:

Ստորև ներկայացվում են համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրի:

1) «Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում» ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրական պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Նախորդ տարվա

համեմատ պահպանման ծախսերը ավել են պլանավորվել 10.2 %-ով՝ հիմք ընդունելով խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև կոմունալ և կապի ծառայությունների ծախսի ավելացումը:

Ոլորտի մյուս ծրագրերում էական փոփոխություններ չեն կատարվել, ծախսերը պլանավորվել են հաշվի առնելով վերջին երեք տարիների փաստացի ցուցանիշները:

2) Նախորդ տարվա համեմատ «Աղբահանություն» բնագավառի ծախսերը ավելացել են 10.1 %-ով: Պահուստային ֆոնդից հատկացում կատարելուց հետո փաստացի ծախսի և ծրագրային գումարի տարբերությունը կկազմի 1.1 %-ը, որը առաջացել է կազմակերպության հաստիքացուցակում ընդգրկված «Ավլոլ բանվորներ» հաստիքի աշխատավարձերի ավելացման հետևանքով:

3) «Աղողջապահություն» ոլորտում նախատեսվել է 1 000.0 հազար դրամ՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ իրականացնելու համար:

4) Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման համար համայնքում ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները՝

4.1) Փողոցների ասֆալտապատման և գծանշման աշխատանքներին հատկացվելու է ֆոնդային բյուջեի ծախսերի 19.5 %-ը, որը նախատեսված է գլխավոր և միջթաղամասային փողոցների փոսային վերանորոգման, շենքերի բակերի և մայթերի ասֆալտապատման և քաղաքում անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով գծանշում կատարելու համար:

4.2) Ֆոնդային բյուջեի ծախսերի 48.4 %-ը ներդրվելու է Աբովյանի N 6 մանկապարտեզի հարթ տանիքը թեք լանջավոր տանիքի վերակառուցելու համար և N 3 մանկապարտեզի մեկ մասնաշենքի հիմանորոգման համար:

4.3) Ծախսերի 1.1 %-ը ուղղվելու է Կարմիր բանակայինների փողոցի անհատական տների գազատարների կառուցմանը:

4.4) Համայնքում առկա են վթարային հանրակացարաններ: Վթարային իրավիճակներից խուսափելու համար բյուջեից կհատկացվի 4 000.0 հազար դրամ Սիրիուսի-1 հանրակացարանի վթարային պատշգամբների վերակառուցման համար, որը կազմում է ֆոնդային բյուջեի ծախսերի 1.1 %-ը:

4.5) Համայնքը շարունակելով հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման քաղաքականությունը՝ 2019 թվականին նախատեսել է 6 000.0 հազար դրամ խաղահրապարակների կառուցման համար: 2-րդ միկրոշրջանում վոլեյբոլի, բասկետբոլի և ֆուտբոլի դաշտերի կառուցման և խաղասարքերի տեղադրման համար կծախսվի ֆոնդային բյուջեի ծախսերի 1.1 %-ը:

4.6) Օղակաձև զբոսայգու կառուցման 1-ին փուլի համար անհրաժեշտ է 41 525.0 հազար դրամ, որը կազմում է կապիտալ ծախսերի 9.6 %-ը:

4.7) Համայնքում շարունակական բնույթ է կրում լուսավորության առկա համակարգի վերափոխումը էներգախնայող համակարգի: 2019 թվականին նախատեսվում է ծախսել 5 000.0 հազար դրամ՝ էներգախնայող լուսատուներ ձեռք բերելու համար:

4.8) Բնակչության կենսական շահերի ապահովմանն աջակցելու նպատակով նախատեսվում է բնակֆոնդի հարթ և լանջավոր տանիքների վերանորոգման համար նյութերի ձեռքբերման ծախս՝ 8 000.0 հազար դրամ արժողությամբ՝ 3500 ք.մ. իզոգամ և 1000 ք.մ. ասբոշիֆեր ձեռք բերելու համար:

4.9) Ֆոնդային բյուջեի ծրագրված ծախսերի 2.3 %-ը կհատկացվի վերը նշված կապիտալ ծախսերի նախագծահետազոտական փաստաթղթերի պատվիրման համար:

4.10) Համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը աջակցելու նպատակով ծրագրվում է ծախսելու 65 000. հազար դրամ՝ նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներին անհրաժեշտ գույքի ձեռք բերման համար: Նախատեսվում է համայնքային գրադարանում ներդնել էլետրոնային գրադարան՝ հզոր համակարգչային տեխնիկայով, որի ձեռքբերման համար նախատեսվել է 5 000. 0 հազար դրամ: Ակտիվների ձեռքբերման գծով ծախսերը պլանավորելիս, հաշվի ենք առել այն հանգամանքը, որ «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ը համայնքում իրականացնում է աղբահանության աշխատանքներ և նրան աջակցելու նպատակով ծրագրվում է գնել նոր տրանսպորտային և վարչական սարքավորումներ՝ 10 000.0 հազար դրամ արժեքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ